

Ժ Ո Վ Ի Ը Փ Ի Ն

Երեկոյ էր:

Արևը տալիս էր իւր վերջին համբոյրը աշխարհին. նրա հրավառ ճառագայթները երփներանգ գոյներով ոսկեզօծել էին արևմուտքը, մինչդեռ արևելքում երկնակամարը սկսել էր մթնել և փոքրիկ փետրաւոր ամպերը, կուտակուելով միմեանց մօտ, հանդարտ լողում էին եթերքի անհուն բարձրութեան մէջ. շառագունած հորիզոնը փայլում էր բոցավառ կրակներով. այդ կրակները երերուն ցուքերով խաղում էին մօտակայ սարերի մերկ, ապառաժոտ գագաթներին, կանաչազարդ լանջերին և մթութեան մէջ կորչող ստորոտներին. խաղում էին եկեղեցիների ոսկեզօծ խաչերի վերայ, տնակների սպիտակին տուող պատերի վերայ, անցնում էին անտառը և շառագունելով այնտեղ հսկայ ծառերի սաղաւարանները, կանաչ թերթիկները և սև ճիւղերը, լուսաւորում էին ամբողջ անտառը մի գերբնական, Ֆանտաստիկական լուսով և վերջ ի վերջոյ հասնելով ծովը, թափւում էին նրա ջրերի մէջ և սկսում էին պսպղալ անթիւ, անհամար աստղերի պէս նրա երերուող մակերևոյթին:

Ծովը խաղաղ էր:

Նա կարծես ակամայ, քնաթաթախ ծփում էր իւր ալիքները եզերքին, թրջում էր մօտակայ քարերը, աւազը և կրկին հանդարտ դարձնում էր իւր հոսանքը դէպի լետ. փոքրիկ, սևին տուող մակույկները հազիւ հազիւ նկատելի կերպով ճօճւում էին ծովի մակերևոյթին և միայն սպիտակ ճալիկներն էին, որոնք սլանում

էին ծովի վերայով, թըջում էին իրենց թևերը ջրի մէջ
և կրկին բարձրանում զէպի վեր:

Ծովը հանգիստ էր առնում, կարծես, յոգնած,
վաստակած իւր անդադրում կատաղի գործունէութիւ-
նից. նա թմրել, ընկել էր խոր քնի մէջ և քաղցր նիր-
հում էր. ինչ ոսկի երազներ էր տեսնում ալեգարդ ծե-
րունին, անցեալի ո՞ր տխուր, սրտատոչոր վաստերը և
տեսիլները երևան էին գալիս նրան...

Ծովը լուռ էր, Լուռ քշում էր նա իւր ալիքները
յառաջ և յառաջ և աւելի ևս խորասուզւում իւր հան-
գիստ, խաղալ քնի մէջ:

Արևմուտքը սկսեց մթնել. արևը արդէն բոլորո-
վին թեքուել էր զէպի ծովը. նրա վերջին անգոր ճա-
ռագայթները սահում էին ջրի մակերևոյթի վերայով և
հետզհետէ կորչում էին հեռու, հեռու հորիզոնի մօտ:

Մութ ստուերները սլափեցին երկիրը և ամեն ինչ
կորաւ այդ խաւարի մէջ. կորան սարերի գագաթները,
վիթխարի ժայռերը, կանաչազարդ լանջերը, խորհրդա-
ւոր լուռ անտառը իւր հսկայ դարաւոր ծառերով, և կե-
ղեցիների բարձր գմբէթները, ծովի բարձրաւանդ ափին
կուտակուած փոքրիկ տնակները և խրճիթները:

Թանձր մշուշը իջաւ ծովի վերայ և կարծես սպի-
տակ քօղով ծածկեց ալեգարդ ծերունուն:

Երկնակամարի անհուն բարձրութեան մէջ վառուեց
առաջին աստղը. նրան հետևեց երկրորդը, երրորդը և
մի քանի ժամանակից ամբողջ երկնքի կամարը ծած-
կուեցաւ անթիւ փայլփյոռ աստղերով:

Իբրև հարսնացու, բանալով իւր արծաթափայլ քօ-
ղը, դուրս եկաւ ամսերի միջից յուսնեակը և իւր մեղմ,
թափանցիկ լոյսը սփռեց սարերի, անտառի, քաղաքի և
ծովի անհուն, անծայր տարածութեան վերայ:

Հասաւ գիշերը, հարաւի սքանչելի, կախարդիչ
գիշերը:

Կամաց կամաց նօսրացաւ, անհետացաւ մշուշը և
օդը, դառնալով աւելի թափանցիկ, սկսեց դողալ ար-
ծաթափայլ ստուերներով:

Հրապուրիչ էր տեսարանը. բնութիւնը կարծես
օրհնում էր իւր Հրաշակերտող Արարչին. այդ օրհնե-
րը:

գը լսուում էր և ծովի մեղմ, կանոնաւոր ծփմունքի և քամու քողցրիկ մեղեդիի մէջ, և անտառի խորհրդաւոր շվշվոցում:

Ծովի ափին, մի բարձր, դուրս ցցուած ապառաժի վերայ նստած էր մի երիտասարդ. նրա թռչնած, դալկացած դէմքը, խորը ներս ընկած և մի անընական կրակով վառուող աչքերը, կնճիռները, որոնք պատել էին նրա լայն, մեծ ճակատը, ցոյց էին տալիս նրա հոգեկան զրուժիւնը. տխուր էր պատանին. յենուած ապառաժին նա անթարթ նայում էր ծովին և մերթ ընդ մերթ, տանելով ձեռը երեսին, տրորում էր ճոկատը և կրկին անզօր վայր ձգում ձեռը: Քամին լիսողում էր նրա երկար գանգրաւոր մազերով, որոնք անկարգ թափուել էին նրա հնամաշ, սև, լայնեղր գդակի տակից նրա սրուած ուսերին:

Պատանին բանաստեղծ էր:

Մանկուլթիւնից մի ինչ-որ գերբնական ոյժ, մի աստուածային կրակ վառել էր պատանու սիրտը, և այդ իսկ օրից չունէր հանգիստ այդ խեղճ սիրտը. ամեն ինչ կեանքում, թէ տխուր, տգեղ երևոյթ, թէ լուս սւոր, փայլուն փաստ, խորը արձագանք էր գրտնում նրա սրտում, քամելով նրա աչքերից կամ աղի արցունք, և կամ բերկրութեան ուրախ ազաղակներ նրա սիրող սրտից. Ապողոնի ոսկեթել, քողցրահնչիւն քնարը ձեռին, նա լաց էր լինում և արցունք թափում աշխարհիս և մարդկութեան դառն վիճակի վերայ. նա սփոփում էր ճնշուածին, հարստահարուածին, անէծք էր թափում բունակալի գլխին, նա երգում էր սէր, յօյս, հաւատ, եղբայրութիւն. նրա հոգեբուղիս երգերը անցնում էին ծայրէ ի ծայր աշխարհս, ներս էին թափում շքեղագարդ պալատները, քարուքանդ խորճիթները, նեղ ու մութ բանգերը, ուր տառապում էին հազարաւոր ողորմելիներ, թափանցում էին ամենքի սրտի խորքը և քանի մի ըոպէ ձգում էին մաշող մըտատանջութեան մէջ.

Երկար մաքառեց երիտասարդ բանաստեղծը աշ-

Քարհիս չարիքի դէմ, երկար թափեց իւր կրակոտ, աբրոդ երգերը մոլորուած ամբոխի երեսին, երկար, շատ երկար քարոզեց մարդկութեանը սուրբ սէր եղբայրութեան, առաջարկեց թողնել լկտի, մեղաւոր կեանքը և ձգտել դէպի կատարելագործութիւն, դէպի լուսաւոր իդէալը, բայց հէգ ամբոխը չլսեց բանաստեղծի հրավառ երգերը, չլսեց և սառն ծիծաղով պատասխանեց նրա սուրբ քարոզներին:

Չվհատուեց պատանի բանաստեղծը, չկտրեց իւր լոյսը. դեռ լի էր նրա սիրտը գերբնական, աստուածային զօրութեամբ, դեռ չէր ցամաքել քաղցրահնչիւն երգերի աղբիւրը, դեռ վառ էր սրբազան կրակը:

— Ձեկան մարդիկ ինձ մօտ, մտածեց նա, ես ինքս կերթամ նոցա մօտ:

Առաւ քնարը ու գնաց:

Մտաւ շքեղ ապարանքներ, անվախ կանգնեց մեծամեծների տաջ և թափեց իւր շրթունքներից այրող երգեր, խիղճ զարթեցնող դալալիկներ, լանդիմանող խրատներ և անիծախառն հաւաչանքներ. դղրդացին մեծաշուք շինուածքների պատերը, լցուեցան հոյակապ դահլիճները սուրբ երգերի քաղցր մեղեդիով, ցնցուեց մեծատունը, դողաց, գունաթափուեց և հրամայեց տալ երգչին, իբրև նուէր, թանկագին գոհարներ և բիւրեղներ:

— Ո՛չ... այդ գանձը քեզ թող մնայ, շնջաց բանաստեղծ պատանին, տո՛ւր այդ ոսկին նրանց, որոնք հեծում են քո ծանր լծի տակ, տո՛ւր նրանց, որոնց արիւն-քրտնքով վաստակել ես դու այդ գոհարները:

Գերեզմանական լուսթիւն տիրեց դահլիճում. լուռ, վախեցած կանգնած էին շրջապատողները. գունատ, վրդովուած մեծատունը զսպեց իրեն և դարձաւ բանաստեղծին.

— Ա՛՛՛՛ն քեզ ուրեմն այս գափնին:

Հեռացաւ պատանին ապարանքից, մտաւ աղքատիկ խրճիթներ և կրկին երգեց իւր հոգեբուղիս երգերը. ամբոխը, անմիտ ամբոխը ապշած լսում էր երգչին և հետաքրքրութեամբ նայում էր նրա սակեթել քնարին:

— Սիրեցէք միմեանց, օգնեցէք չբաւորներին, ձրգ-

տեցէք դէպի լոյսը, բա՛ւ է ինչ որ խարխափեցիք խաւարում, երգում էր պատանին:

Իսկ ամբոխը անմիտ նայում էր նրա թոշնած, դալկացած երեսին և առաջարկում էր նրան հաց, կարծելով որ նա աղքատ է և քաղցած:

Չհասկացաւ պատանուն խաւարամիտ ամբոխը, և դառն արցունքներ թափելով երիտասարդ բանաստեղծը, հեռացաւ նրանից և եկաւ ծովի ափը:

Լուսնեակը արդէն բարձրացել էր երկնքում և իւր կաթնազօյն ճառագայթները անդրադարձնում էր ծովի ջրերում: Երկար նայեց պատանին այդ ցոլացող, երերող մակերևոյթին և առնելով իւր քնարը, զարկեց ուժգին լարերին և սկսեց երգել:

Նրա ուժգին ձայնը գեղեցիկ օրօրուող ելեէջներով տարածուեցաւ գիշերային լուսթեան մէջ. նրա դրախտային դայլալիկները լցրին օդը մի այնպիսի դիւթիչ մեղեգիով, որ ամեն ինչ բնութեան մէջ լուռ ու մուռջ սկսեց ականջ դնել պատանու երգին. լսում էր նիրհած ծովը, լսում էին երկնքից փայլփլող աստղերը, լսում էր խորհրդաւոր լուռ անտառը, լսում էին մերկ ժայռերը, լուսնեակը, և նոյն իսկ քամին վախում էր շնչել և քարացած լսում էր պատանուն. և իրաւ, դեռ երբէք այդպէս զգացուած, այդպէս գեղեցիկ չէր երգել պատանի երգիչը: Զմայլեցուցիչ դայլալիկները փոխուեցին դառն գանգատների՝ մարդկութեան անսրտութեան, վատութեան դէմ, աշխարհիս անթիւ չարիքների դէմ, աշխարհիս, ուր լաց ու կոծի ձայնը խեղդում փակում է ուրախութեան բերկրալից աղաղակները, ուր աւելի անէծք է լսում, քան աղօթք, ուր մահը աւելի անձկալի է, քան չարչարող, մաշող կեանքը:

Լուսնեակի լոյսի տակ, կանգնած ապառաժի վըրայ, քնարը ձեռին, աչքերը լառած երկնքին, պատանի երգիչը վերջացրեց իր երգը՝ անէծք կարգալով աշխարհի և մարդկութեան վերայ: Ուժգին, կատաղի որոտաց երգի վերջին հնչիւնը և մարեց հեռու, հեռու սարերի ստորոտում:

Պատանին զարկելով ապառաժին վշրեց իւր քնարը և ողբաց:

Այդ իսկ ըուպէին ծովի մակերևույթի վերայ երևացմի գեղեցիկ կին, ոտից գլուխ սպիտակ հագնուած, երկար մազերը թողած մինչ արմունկը՝ նա տարածեց իւր սպիտակ ձեռները դէպի պատանին.

— Ե՛կ... Եկ ինձ մօտ, իմ անձկալիս, վաղուց է սպասում եմ քեզ... օօ, մարդիկ չեն կարող հասկանալ քեզ... Եկ... իմ կրծքիս վերայ ողբ՛ս քո դառն կսկիծը... իմ փաղաքշտանքներիս ներքոյ դու կրմօտանաս քո ցաւերը, քո վիշտը... կըսիրեմ ես քեզ այնպէս, ինչպէս մարդիկ կարող չեն սիրել երբէք... Եկ... Եկ ինձ մօտ:

— Ո՞վ ես դու, բացագանչեց պատանին:

— Ես... ես լաւերժահարս եմ... տես... ես սիրում եմ քեզ, իմ անգինս, իմ աստղս... իմ շքեղ պալատում կապրես դու. արնը, լուսնետիկը, աստղերը, քամին կըդառնան քո հլու ծառաներդ... չնսշխարհիկ երգեր կերգեմ ես քեզ համար և քաղցրիկ օրօրներ կասեմ, երբ կամենաս քնել իմ սպիտակ կրծքիս վերայ...

Յաւերժահարսը մօտեցել էր ապառաժին, լուսինը լուսաւորում էր նրա գեղեցիկ սպիտակ մարմինը, երկար շագանակագոյն մտքերը, մերկ պարանոցը և դէպի պատանին տարածած մարմարիոնեայ բազուկները: Մի ինչ-որ անհասկանալի, գաղտնի ոյժ մղում էր պատանուն դէպի այդ ծովի գեղեցկուհին. որի խօսքերը, տեսքը, մարմինը խոստանում էին հրապոյր, կիրք և՛ սէր՝ նայեց պատանին վերջին անգամ քնած քաղաքին, սրտի խորքից ախ քաշեց և նետուեցաւ ծովը:

Ալեզարդ ծերունին լուռ ընդունեց իւր զոհը, միայն մի ըուպէ փրփրացին նրա ալիքները, խուլ շվշվոցով զարկուեցան ապառաժի բորբոսնած ստորոտին և կրկին լուռ, կրկին մունջ սկսան առաջ քշել իրենց ծփծփացող ջրերը:

Գ. ԶՈՒՅԱՐ